

Հայտարարություն Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանի թեկնածուական գիտական թեզի պաշտպանությունը լուսաբանող լրագրողների աշխատանքը խոչընդոտելու կապակցությամբ

Դեկտեմբերի 27, 2013

Դեկտեմբերի 26-ին, երբ Երևանի պետական տնտեսագիտական համալսարանում տեղի էր ունենում բարձրագույն որակավորման հանձնաժողովի խորհրդի բաց նիստը, որի ընթացքում կայանալու էր Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի թեկնածուական գիտական թեզի պաշտպանությունը, խոչընդոտվեց այն լուսաբանելու նպատակով եկած լրագրողների աշխատանքը: Խիստ դատապարտելի է այն, որ ՁԼՄ-ների ներկայացուցիչների մուտքն արգելափակելու նողկալի գործողություններում ներգրավված էին նույն համալսարանի ուսանողները, ովքեր քաշքշել եւ վիրավորական արտահայտություններ են ուղղել լրագրողներին:

Տնտեսագիտական համալսարանի ղեկավարության փաստարկները, թե բուհն իր ռեժիմն ունի, եւ լրագրողներն այնտեղ ներկա գտնվելու թույլտվություն պիտի ունենան, որեւէ քննադատության չի դիմանում, քանի որ բաց միջոցառում կազմակերպելիս՝ բուհը պարտավոր էր դրան մասնակցելու հնարավորություն ապահովել բոլոր ցանկացողների, մասնավորապես, նաեւ լրագրողների համար:

Ակնհայտ է, որ այնպիսի հրապարակային իրադարձություն, ինչպիսին թեկնածուական թեզի պաշտպանությունն է, լրագրողների համար փակ է դարձել հենց այն պատճառով, որ գիտական աստիճանի հայցորդը քաղաքապետ Տարոն Մարգարյանն էր: Եվ չնայած վերջինիս հավաստիացումներին, որ ինքը տեղյակ չի եղել ՁԼՄ-ների ներկայացուցիչների առջեւ մուտքը փակելուն, դժվար է պատկերացնել, որ դա կարող էր տեղի ունենալ իր կամքին հակառակ:

Այս միջադեպը մեկ անգամ եւս վկայում է, որ Հայաստանի քաղաքական վերնախավի ու բարձրաստիճան պաշտոնյաների մեծ մասը չի յուրացրել քաղաքակիրթ աշխարհում ընդունված այն նորմը, որ իրենք ճանաչելի դառնալով՝ իրենց վրա են սեւեռում հանրության ուշադրությունը, եւ խուսափում է իր գործունեությունը թափանցիկ դարձնելուց:

Մենք՝ ներքոստորագրյալներս, Տնտեսագիտական համալսարանում տեղի ունեցած միջադեպի առնչությամբ պահանջում ենք՝

- Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանից բացատրություն՝ տեղի ունեցածի վերաբերյալ,
- ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունից՝ քննել Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորի՝ իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանելու հարցը՝ ուսանողներին անբարո գործի մեջ ներքաշելու համար,
- իրավապահ մարմիններից՝ միջադեպի մեղավորներին պատասխանատվության ենթարկել՝ լրագրողների օրինական գործունեությանը խոչընդոտելու համար:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՄԵԴԻԱ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (նախկին ՄԱՍՈՒԼԻ

ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ «ԻՆՏԵՐՆՅՈՒՄ» ՀԿ)

ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ

ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ – ՀԱՅԱՍՏԱՆ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ